«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Երևանի պետական համալսարանի
Պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Է. Ասրիյան
«23» հոկտեմբերի 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Գեորգու Խորիկյանի՝ «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» վերտառությամբ Է.00.02-«Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի 23.10.2020 թվականին կայացած ընդլայնված նիստում, արձանագրություն թիվ №4, մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Վ. Ոսկանյանի, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մելքոնյանի, պ.գ.դ. Հ. Հարությունյանի, պ.գ.թ., դոցենտ Գ. Իսկանդարյանի, բ.գ.թ. Գ. Գևորգյանի, բ.գ.թ. Ա. Տոնոյանի, պ.գ.թ. Թ. Ամրյանի, բ.գ.թ. Հ. Կիրակոսյանի քննարկվել է Հովհաննես Գեորգու Խորիկյանի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման՝ «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» ատենախոսությունը:

Հովհաննես Խորիկյանի ատենախոսությունը վերաբերում է Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման քաղաքականությանը՝ այդ պետության երկհարյուրամյա գոյության ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով: Ատենախոսությունն ունի գիտական արդիականություն. Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման ուսումնասիրությունը և՛ իրանագիտության, և՛ այլ գիտակարգերի համար ունի կարևոր նշանակություն, ատենախոսությունում քննարկվող հարցերը լուրջ հետաքրքրություն են ներկայացնում նաև Աքեմենյան դարաշրջանին նախորդող ու հաջորդող ժամանակների համար: Տեսական կարևորությունից բացի թեման ունի նաև գործնական և քաղաքական արդիական նշանակություն, քանի որ ատենախոսությունում քննարկվող բազմաթիվ հարցեր կարող են էլ ավելի նեղ մասնագիտական քննության առարկա դառնալ՝ հատկապես պայքարելով թուրքական, ադրբեջանական, վրացական պատմագիտական կեղծիքների դեմ: Ատենախոսության արժանիքներից է նաև խնդրո առարկա թեմայով սկզբնաղբյուրների ու մասնագիտական գրականության օգտագործման ծավալը: Հիշյալ թեմայի վերաբերյալ գիտական նման հարցադրմամբ և իրականացված մանրակրկիտ աշխատանքով ևս ատենախոսությունը արժեքավոր է, արդիական և պարունակում է հստակ գիտական նորույթ:

Ատենախոսն իր աշխատությունում հանգամանորեն ներկայացնում է Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգը՝ կատարելով պատմաաշխարհագրական բազմաթիվ ու կարևոր նույնացումներ, վարչական

միավորների սահմանների հստակեցումներ, տարբեր ցեղերի բնակության նոր տեղադրություններ, ընդ որում՝ բոլոր տեսակետներն ամրապնդելով աղբյուրագիտական տարաբնույթ նյութի հիմնարար քննությամբ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը կազմված է համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից:

Ներածությունում ատենախոսն անդրադառնում է թեմայի արդիականությանը, ներկայացնում է աշխատանքի նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, ժամանակագրական և աշխարհագրական ընդգրկման սահմանները, թեմայի տեսական և գործնական նշանակությունը, օգտագործված գրականության վերլուծությունը և այլն:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Փոքր Ասիայի վարչական բաժանումը», իր հերթին բաժանված է ինը ենթագլուխների: Վերոհիշյալ գլխում հանգամանալից ներկայացված են Փոքր Ասիայի տարածքն ընդգրկող երկրների ու սատրապությունների տեղադրությունը, տարածքը, Փոքր Ասիայում բնակվող տարբեր ժողովուրդների ու ցեղերի նույնացման և տեղորոշման հարցերը, ինչպես նաև քաղաքների, լեռների, գետերի, լճերի նույնացման ու տեղադրության նոր տեսակետները կամ հին տեսակետների լրացուցիչ ու էական հիմնավորումը:

Երկրորդ գլուխը՝ «Հյուսիսաֆրիկյան և արևելամիջերկրածովյան սատրապությունները», բաղկացած է չորս ենթագլխից, որոնցից յուրաքանչյուրում մանրամասն քննվում են Եգիպտոսի, Արաբիայի, Պաղեստինի, Սիրիայի և Փյունիկիայի վարչական կացության հետ կապված բազմաբնույթ հարցերը, որոնք մասնագիտական գրականության մեջ կա՛մ թերի են ուսումնասիրվել, կա՛մ ընդհանրապես ուշադրության չեն արժանացել: Այս գլխում ևս ատենախոսին հաջողվել է գիտականորեն ճիշտ ընտրված մեթոդաբանությամբ կատարել հարցադրումներ, որոնք իրենց պատասխանների մեջ բավականին համոզիչ են, քանի որ վերոնշյալ երկրների վարչական բաժանման խնդիրները քննվել են Աքեմենյան ամբողջ տիրապետության կտրվածքով:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Կենտրոնական սատրապությունների վարչական բաժանումը», ատենախոսության ամենաընդարձակ բաժինն է և բաղկացած է տասներեք ենթագլխից: Հեղինակն այս գլխում սեպագիր, հունահռոմեական, հայկական և այլ սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննությամբ ներկայացնում է Առաջավոր Ասիայի տարածքն ընդգրկող տարբեր սատրապությունների, սրանց մաս կազմող ենթաշրջանների կամ հյուպարքիաների վարչական սահմանները՝ կատարելով համաժամանակյա և տարաժամանակյա հմուտ քննություն: Շատ կարևոր են հեղինակի կողմից Առաջավոր Ասիայում բնակվող ցեղերի ու ժողովուրդների նույնացման և տեղադրության հարցերին նվիրված մեկնաբանությունները, որոնք թույլ են տալիս նոր լույսով պատկերացնել տարածաշրջանի էթնիկական քարտեզը:

Չորրորդ գլուխը վերնագրված է «Արևելյան սատրապություններ», որը բաղկացած է վեց ենթագլխից: Այս գլխում հեղինակը ցույց է տալիս Միջին Ասիան և հնդկական հողերն ընդգրկող սատրապությունների տեղադրությունը՝ կատարելով էթնիկական նույնացման ու ցեղային տեղաշարժերի ուշագրավ բացահայտումներ. օրինակ, սակ-սկյութների ու կասպերի հետ կապված եզրահանգումները:

Հինգերորդ գլուխը վերնագրված է «Վարչական բաժանման և պատմական աշխարհագրության այլ հարցեր», որը բաղկացած է հինգ ենթագլխից: Այս գլխում հեղինակի խորքային ու բազմակողմանի քննությունը թույլ է տվել ներկայացնել Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների ձևավորման սկզբունքը, ինչը պայմանավորված էր 20-ից ավելի վարչական միավորների կազմավորման ժամանակագրական հերթականությամբ: Հեղինակի կողմից Ակաուֆաչիյա երկրի տեղորոշման և անվան ստուգաբանությունը ևս լուրջ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ փոխվում են մինչ այս եղած պատկերացումներն Այսրկովկասի պատմական աշխարհագրության վերաբերյալ: Սկուդրայի կամ XXI սատրապության, ցեղային վերաբնակեցումների քաղաքականության, ռազմավարչական բարձր պաշտոնի՝ կարանոսի հետ կապված հարցերի վերլուծությունը ևս թույլ է տվել հեղինակին ուշադրության արժանի հետևություններ կատարել: Ատենախոսությունն ավարտվում է եզրակացությամբ, որտեղ ներկայացված են համապատասխան եզրահանգումները:

Աշխատանքում օգտագործվել է բազմալեզու հարուստ աղբյուրագիտական ու մասնագիտական գրականություն, ինչը թույլ է տվել հեղինակին կատարելու խորքային լուրջ ուսումնասիրություն:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի ընդհանուր բովանդակությանը, իսկ հեղինակի 40 գիտական հրապարակումներում արտացոլված են ատենախոսության հիմնական գիտական արդյունքները:

Ամբիոնը վստահորեն արձանագրում է, որ Հ. Խորիկյանի ատենախոսությունը լուրջ ձեռքբերում է համեմատաբար քիչ ուշադրության արժանացած Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման և պատմական էթնո-աշխարհագրության ուսումնասիրության ոլորտում, որի տարածական սահմաններն ընդգրկում են գրեթե ամբողջ բնակելի հին աշխարհը: Միաժամանակ ամբիոնն ուշադրություն է հրավիրում որոշ հարցերի վրա, որոնց առավել հիմնավոր ներկայացումն ավելի շահեկան կդարձներ սույն արժեքավոր ուսումնասիրությունը.

1. Մասնավորապես, ատենախոսը կարող էր առանձին քննության առարկա դարձնել սատրապի ինստիտուտի ուսումնասիրությունը, ինչը վարչական բաժանման համատեքստում թույլ կտար խորքային պատկերացում կազմել սատրապությունների ներքին կառավարման մասին:
2. Անկախ այն հանգամանքից, որ XIX սատրապության վերաբերյալ նախկինում հեղինակն ուսումնասիրություններ կատարել է, թերևս այս սատրապության մասին պետք էր ավելի ծավալուն ներկայացնել, որպեսզի ընթերցողն ատենախոսության մեջ տեսներ այդ բազմէթնիկ սատրապության վարչական

կացությունը, հատկապես, եթե նկատենք, որ առ այսօր վրաց պատմագիտության մեջ Սև ծովի հարավարևելյան և Հայկական լեռնաշխարհի հյուսիսային, հյուսիսարևմտյան հատվածների հին պատմությունը շարունակվում է կեղծվել:

3. Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը քարտեզով ներկայացներ Աքեմենյան տերության և սատրապությունների սահմանները:
4. Կան որոշ տեխնիկական թերություններ. բովանդակության մեջ հեղինակը բաց է թողել 1-ին գլխի 1.8. ենթագլուխը, էջ 236-ում, հղում 1481-ում հեղինակի նշած հոդվածը՝ «Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության սասպեյրների տեղադրության շուրջ», ՄԱ, 2014, IX-X, գրականության ցանկում չկա:

Այնուամենայնիվ, վերոնշյալ նկատառումները չեն ստվերում ատենախոսության ընդհանուր արժեքը, կատարված աշխատանքի կարևորությունն որպես Իրանի հին պատմության հայալեզու ուսումնասիրության հաջողված փորձ:

Ամբիոնը միաձայն գտնում է, որ Հովհաննես Խորիկյանի՝ «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, ամբողջովին համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից դոկտորական ատենախոսությանը ներկայացված պահանջներին, ուստի ատենախոս Հովհաննես Գեորգու Խորիկյանն արժանի է իր հայցած Է.00.02-«Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի դեկան
պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մելքոնյան

Երևանի պետական համալսարանի
իրանագիտության ամբիոնի
վարիչ, բ. գ. թ., դոցենտ Վ. Ոսկանյան

«Հաստատում եմ»

Երևանի պետական համալսարանի գիտական
քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Է. Հովսեփյան